ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԳԱՎԱՌԸ 1921 Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հ. Մ.

Հայաստանում խորհրդային իշխանության անհեռատես և արկածախնդիր ներքին քաղաքականության (սոցիալ-տնտեսական ու քաղաքական բռնաճնշումների մի ողջ համակարգ) հետևանքով կենսագրության երկրորդ տարվա շեմին պետությունը ճաշակեց ցանած սերմերի դառը պտուղները: Խորհրդային պետական մեքենան այս քաղաքականությամբ բնակչության լայն զանգվածներին մղեց զինված ապստամբության և հեշտացրեց Դաշնակցության գործը՝ նորից վերցնելու իշխանությունը: Բնութագրական է այս առումով Ս. Վրացյանի՝ 1921 թ. փետրվարի 20-ին Գարեգին Նժդեհին գրած նամակում բոլշևիկների վարած ներքին քաղաքականությանը տրված գնահատականը. «Բոլշևիկների ստեղծած դժոխքը Հայաստանում մի հետևանք ունեցավ: Ամբողջ ժողովուրդը ապստամբեց և տապալեց նրանց բռնապետությունը»[1]:

1921 թ. փետրվարին Հայաստանի մեծ մասում բռնկվեց զինված ապստամբություն: Ապստամբներից ընդամենը երեք օր (փետրվարի 16-18) պահանջվեց գրավելու Երևանը: Նոր իշխանությունը դարձավ «Հայրենիքի փրկության կոմիտեն»՝ Ս. Վրացյանի նախագահությամբ: Խորհրդային Հայաստանի կուսակցական և պետական ղեկավար մարմինները Երևանից անվտանգ[2] անցան Ղամարլու-Աղբաշ, ապա հաստատվեցին Շարուրում: «Հայրենիքի փրկության կոմիտեն», Հայաստանի մեծ մասի վրա հաստատելով իր իշխանությունը, հույս ուներ կարճ ժամանակում այն տարածել հանրապետության ողջ տարածքի վրա: Դա ակնհայտ էր Ս. Վրացյանի՝ Գ. Նժդեհին ուղարկած վերոգրյալ նամակից. «Արդեն Բաշ Ապարանի, Թալինի, Ախտայի, Կոտայքի, Երևանի, Էջմիածնի, Զանգի Բասարի շրջանները մաքրված են բոլշևիկներից: Միջոցներ են ձեռք առնվում մաքրելու նաև Դարալագյազը, Նոր Բայազետը, Ղազախը, Լոռին… Չենք կասկածում հաջողության մասին: Ժողովուրդը ամեն տեղ խանդավառ է և մեզ հետ է»[3]:

Փետրվարյան ապստամբության պատճառների, սկսվելու, պարտության և հետևանքների լուսաբանմանը հայ պատմագիտությունը բազմիցս անդրադարձել

---

[1] **Նժդեհ Գ.,** *Երկեր, հ. 2, Ե., 2002, էջ 135:*

[2] *Երևանի գրավման ժամանակ ապստամբների հրամանատար Կ. Թարխանյանի հրամանով երկաթուղային կայարանի ուղղությամբ միջանցք է բացվել (պատուհան)՝ քաղաքից Հեղկոմի, կուսակցական-պետական մարմինների հեռանալու համար (տե՛ս* **Հակոբյան Ա.,** *ՀՍԽՀ 1921 թ. ներքաղաքական կյանքի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Ե., 2014, էջ 92):*

[3] **Նժդեհ Գ.,** *նշվ. աշխ., հ. 2, էջ 135:*

է: Մեզանում և Սփյուռքում ստեղծվել է այդ հարցին նվիրված պատմագիտական և հուշագրական մեծածավալ գրականություն[4]*: Ուսումնասիրողների մի մասը ապստամբության համար հայհոյում ու քարկոծում է բոլշևիկներին՝ թիրախ դարձնելով նրանց այսպես կոչված ապիկար քաղաքականությունը, մյուսները՝ Դաշնակցությանը՝ փետրվարյան ապստամբությունը իբր նախապատրաստելու և ղեկավարելու համար: Հետխորհրդային պատմաբաններից ոմանց՝ մասնավորապես Վ. Ղազախեցյանի, Ա. Սիմոնյանի և Ա. Հակոբյանի կարծիքով՝ երկու կողմերն ունեցել են իրենց մեղքի բաժինը*[5]*: Այս տեսակետների ու մոտեցումների քննությունը դուրս է մեր ուսումնասիրության շրջանակից: Բայց և այնպես հարկ ենք համարում վերստին փաստել մի անառարկելի իրողություն. Հայաստանում խորհրդային իշխանությունը չուներ բավարար սոցիալական հենարան: Դրսից պարտադրված իշխանության գոյության հուսալի հենարանը նոր կազմավորվող հայկական բանակն էր: Նշենք նաև, որ Հայաստանում, բացի հայկական բանակից, տեղակայված էին նաև ռուսական 11-րդ Կարմիր բանակի զորամասեր, որոնք Փետրվարյան ապստամբության նախօրյակին մեծ մասամբ տե-ղափոխվել էին Վրաստան:*

ՀՍԽՀ ղեկավարությունը մեծ աշխատանք ծավալեց նախկին բանակը վերակառուցելու և նոր իշխանության կողմը գրավելու ուղղությամբ: Առաջին քայլը եղավ Դրո-Սիլին ռազմական հրամանատարության 1920 թ. դեկտեմբերի 2-ի

---

[4] **Амирханян Ш.** *Из истории борьбы за советскую власть в Армении, Е., 1967;* **Борьян Б.** *Армения, международная дипломатия и СССР, ч. II, М.-Л., 1929,* **Իրազեկ Հ.**, *Մոտիկ անցյալից: Պատմական դեպքեր և ապրումներ. 1917-1922, Պեյրութ, 1956:* **Քաջազնունի Հովհ.**, *ՀՅ Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Թիֆլիս, 1923:* **Վրացյան Ս.**, *Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993:* **Սասունի Կ.**, *Փետրվարյան ապստամբությունը (1921 թ.), Պեյրութ, 1970:* **Եպիսկոպոսեան Ա.**, *Ով կազմակերպեց Փետրուարեան արկածախնդրութիւնը և ինչ եղաւ անոր հետևանքը, Գահիրէ, 1969:* **Բաղդասարյան Ա.**, *Քաղաքացիական պատերազմը Հայաստանում, Ե., 1931:* **Տասնապետեան Հ.**, *ՀՅ Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ ընդհ. ժողով (1890-1924), Աթենք, 1988:* **Ա**բրահամյան Մարտիրոս-Բաշգառնեցի, *Իմ հիշելի հուշերը, Հայ դատի մատենաշար, թիվ 7, Թեհրան, 1978:* **Չուբարյան Գ.**, *Դաշնակցության տաճկական օրիենտացիան և Հայրենիքի փրկության կոմիտեն, Ե., 1929:* **Հակոբյան Արշ.**, *Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թ., Ե., 1948: Նույնի՝ Հայաստանի բանվորների և գյուղացիության հաղթանակը 1921 թ. քաղաքացիական կռիվներում, Ե., 1960:* **Գևորգյան Վ.**, *Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Ե., 2010:* **Վարդապետյան Ա.**, *Հայաստանի Կարմիր բանակը քաղաքացիական կռիվներում 1920-1921 թթ., Ե., 1960:*

[5] *Տե՛ս* **Ղազախեցյան Վ.**, *Հայաստանը 1920-1940 թթ., Ե., 2006,* **Սիմոնյան Ա.**, *Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., Ե., 2000:* **Հակոբյան Ա.**, *ՀՍԽՀ 1921 թ. ներքաղաքական կյանքի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Ե., 2014:*

հրամանը բանակի վերակազմավորման մասին[6]: Այսուհետ այն կոչվելու էր Խորհրդային Հայաստանի Կարմիր բանակ և կազմակերպչական սկզբունքներով նմանվելու էր ռուսական բանակին: Բանակը վերակազմավորման ենթարկելու (կազմակերպական, գաղափարաքաղաքական, բարոյա-հոգեբանական) բուն գործողությունը չուշացավ: 1921 թ. հունվարի 2-ին ՀՍԽՀ տարածքում գտնվող Կարմիր բանակի զորամասերի (1921 թ. հունվարի 1-ի դրությամբ հայկական Կարմիր բանակի կազմում հաշվվում էր 6 հազար սվին, 853 թուր, 44 հրանոթ և 236 գնդացիր)[7] հրամանատար Մոլկոչանովը[8] հրաման արձակեց. «...զորքին անհրաժեշտ հանգիստ տալու, նրանց կարգի բերելու և մարտական պատրաստությունը պահպանելով հանդերձ, նրանց քաղաքականապես պատրաստելու նպատակով, բանակը բաժանվում է 4 մարտական խմբերի և բանակային օժանդակի»[9]: Դրանք բաժանվեցին Հայաստանի տարբեր շրջաններում[10]: Նշենք երկուսը, որոնք վերաբերում են մեզ հետաքրքրող հարցին: 1. Նոր Բայազետի խմբավորումը (մեկ գումարտակ, մեկ լեռնային մարտկոց) փոխգնդապետ Գևորգ Բեկ-Զուրաբովի (Զուրաբյան) հրամանատարությամբ տեղափոխվեց Նոր Բայազետ՝ ներքին կարգը պահպանելու համար: 2. Բանակի օժանդակը (բոլորը միասին՝ 6 գումարտակ, 12 հրանոթ, 5 հեծյալ վաշտ) տեղակայվեց Երևան-Քանաքեռ, Ներքին Ախտա-Ելենովկա-Օրդաքլու շրջաններում[11]:

Բանակի վերակառուցման առումով ճիշտ է նկատել Արշ. Հա-կոբյանը. «Հայաստանում կանգնած կարմիր զորքերի[12] հրամանատարությունը մինչև փետրվարյան (իր խոսքերով) ավանտյուրայի սկսվելը իրեն ենթակա զորքերը

---

[6] ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պր. 1, Էջմիածին, 1921, էջ 5-7:

[7] Տե՛ս **Հարությունյան Կ.,** *Հայկական ազգային զորամիավորումները (1918-1945 թթ.), Ե., 2002, էջ 86:*

[8] Պաշտոնաթող արված և Մոսկվա տեղափոխված Դրոյի փոխարեն Հայկական բանակի հրամանատար դարձավ Մոլկոչանովը, կոմիսարը՝ Սվիրիդովը:

[9] Տե՛ս **Բաղդասարյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 18:*

[10] Առանձին խմբավորումների միջև նշանակվում էր սահմանը որոշող գիծ: Բոլոր շտաբներին, զորական մասերին ու բրիգադներին հրամայվում էր հատուկ ուշադրություն դարձնել կապի դյուրության վրա և ամուր տեխնիկական կապ սահմանել միմյանց միջև և բանակի շտաբի հետ (տե՛ս նույն տեղում, էջ 19):

[11] Նույն տեղում, էջ 18-19:

[12] Փետրվարյան ապստամբության նախօրյակին Հայաստանի Կարմիր բանակն իր կազմում ուներ 3 հրաձգային և 1 հեծյալ բրիգադ, մի քանի այլ հատուկ նշանակության ստորաբաժանումներ, 3 զրահագնացք՝ 6 հրանոթով, 4 գնդացիրներով և այլն: Բանակի կազմում հաշվվում էր 6300 սվին, 900 թուր, 45 հրանոթ և 400 գնդացիր (տե՛ս **Таирян И.** *XI Красная армия в борьбе за установление и упрочение советской власти в Армении, Е., 1971, с. 205,* **Հակոբյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 80:* **Հարությունյան Շ.,** *Հայ ժողովրդի պատմություն (1917-1968), Ե., 1970, էջ 147:*

չկարողացավ նոր վերախմբավորման ենթարկել, ռազմական հզոր բռունցք ստեղծել՝ ավանտյուրայի հենց սկզբին հակառակորդին արագորեն ջախջախելու համար»[13]: Փաստերը, որ հայկական Կարմիր բանակը մեծ հաշվով հուսալի չի եղել ապստամբությունը հենց սկզբից ճնշելու և նրա տարածումը թույլ չտալու համար, բազմաթիվ են: Այդ մասին խոստովանում են նաև Հայհեղկոմի մի քանի անդամներ Գ. Օրջոնիկիձեին ուղղված հեռագրով[14]: Ավելին, Կարմիր բանակի շատ զորամասեր ոչ միայն չեն կռվել ապստամբների դեմ, այլև զանգվածաբար անցել են ապստամբների ճամբար[15]: Ի դեպ, կարմիրների շարքերը լքելու և ապստամբների կողմն անցնելու մասին է նշել նաև Նոր Բայազետի զորամասի արդեն նախկին պետ, փոխգնդապետ Գևորգ Բեկ-Զուրաբովը 1921 թ. հունիսի 2-ի զեկույցում՝ ուղղված Լեռնահայաստանի սպարապետի օգնականին: Զեկույցի մեջ ներառված ցուցակում փոխգնդապետը նշում է կոնկրետ անուններ, որոնք նաև աչքի են ընկել ապստամբության ողջ ընթացքում: Ստորև բերված է այդ ցուցակը:

«ՑՈՒՑԱԿ

Նոր Բայազետի զորամասի սպաների և հրամանատարության, որ ամենից ավելի աչքի են ընկել բոլշևիկների դեմ եղած ապստամբության ժամանակ[16]

1. *Շտաբս-կապիտան Ասլանյան Հակոբ Գրիգորյան - կռիվների ընթացքում հրամանատար է եղած մի գումարտակի, անձամբ մասնակցելով բոլոր դեպքերին:*
2. *Պրապորշչիկ Ծուրինով Գեորգ Իվանովիչ - պետ գնդացրային ջոկատի և ապստամբության գլխավոր հեղինակներից մեկը, ապստամբության կազմակերպիչ Բասարգեչարում և իր շրջանում:*
3. *Պրապորշչիկ Տեր-Ավանեսով - Օհանես Տեր-Արիստակեսյան- հրամանատար Բասարգեչարի վաշտի, հաճախ իր վաշտով կարմիրների հարձակումը հետ մղած:*
4. *Առանց աստիճանի. Արզուման Ռուբեն Օհանեսի - հեծյալ հետախուզական ջոկատի պետ, իր ջոկատն անձամբ հար-ձակման առաջնորդած «1 բառաչափ ազատ տեղ», ուր և վիրավորված է, ապստամբությունը կազմակերպող խմբի անդամ: Միշտ և ամենուր իր*

---

[13] **Հակոբյան Արշ.,** *Հայաստանի բանվորների և գյուղացիության հաղթանակը 1921 թ. քաղաքացիական կռիվներում, էջ 65:*

[14] *Մանրամասն տե՛ս* **Հակոբյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 86:*

[15] *Տե՛ս Զանգեզուրի հերոսամարտը հրամաններում (1921 թ.), կազմողներ՝* **Ղազախեցյան Վ., Գևորգյան Հ.,** *Ե., 2008, էջ 35-36:* **Նժդեհ Գ.,** *նշվ. աշխ., հ. 2, Ե., 2002, էջ 135, Բանբեր Հայաստանի արխիվների (այսուհետ՝ ԲՀԱ), 1978, թիվ 1, էջ 135:*

[16] *Զանգեզուրի հերոսամարտը հրամաններում (1921 թ.), էջ 36:*

ջոկատը վարած է բոլշևիկների դեմ դեռևս Նոր Բայազետի գավառում եղած ժամանակ:

5. Ենթասպա Այվազյան Նիկողայոս Սարգսի - հեծյալ ջոկատի հրամանատարի փոխանորդ: Ամենահամեստ և ամենագործարար աշխատավորը Նոր Բայազետի զորամասի: Իր անձնական քաջությամբ և դիմացկունությամբ մեկից ավելի անգամներ փրկել է զորամասը ամենածանր կացություններից:
6. Սերոբ Ավետիսյան - մեծ ջանք ու ճիգ է թափել կազմակերպելով քաղաքացիական իշխանություն և ապա մտցնելով հանգստություն և նպատակահարմար աշխատանք կռիվների մեջ, իր անձնական քաջությամբ օրինակ դառնալով զորամասի զինվորներին:

Նոր Բայազետի զորամասի նախկին պետ՝
փոխգնդապետ Բեկ-Զուրաբով»

Հակախորհրդային ուժերն ապստամբեցին փետրվարի 16-ին: Ստեղծվեց քաղաքացիական կռիվների երեք ճակատ: Մեկը՝ Ղամարլու-Վեդիի շրջան: Մյուսը Հայաստանի հյուսիսն էր՝ խորհրդային իշխանության գոտին[17] երկու թևերով՝ ձախը՝ Ելենովկա-Սեմյոնովկայի լեռնանցք շրջանը՝ Նոր Բայազետով հանդերձ, և աջը՝ Սպի-տակի լեռնանցքի հատվածը[18]: Մեզ հետաքրքրողը հյուսիսային ձախ ճակատն է, որբբացվեց ապստամբությունը սկսվելու հետ միաժամանակ: 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Հեկկերի փետրվարի 18-ի հրամանով Ալեքսանդր Շիրմախերը նշանակվեց Ղազախ-Դիլիջան մարտական շրջանի պետ: Նրան հանձնարարվեց ստանձնել Համամլու - Ղարաքիլիսա-Դիլիջան-Ելենովկա շրջանների պաշտպանությունը, մաքրել ապստամբներից Ելենովկա-Ախտա-Սուխոյ Ֆոնտան շրջանները և վերականգնել Երևան-Դիլիջան հաղորդակցությունը[19]: Շիրմախերի հրամանատարության տակ գործելու էին 60-րդ բրիգադան՝ 3 գնդերով, 156-րդ գնդի 52-րդ բրիգադան, 179-րդ գնդի 60-րդ բրիգադան, 1-ին հրաձգային գնդի 9-րդ հրաձգային դիվիզիան, 1 հեծյալ գունդ, հրետանի և այլ ուժեր[20]:

---

[17] Խորհրդային իշխանությունը, որը պահպանվել էր Հայաստանի հյուսիսային շրջաններում՝ Ղարաքիլիսա-Դիլիջան շրջաններում ստեղծել էր իշխանության ժամանակավոր մարմին՝ Դիլիջանի և Ղարաքիլիսայի գոտու ռազմահեղափոխական կոմիտե՝ Գևորգ Աթաբեկյանի գլխավորությամբ (տե՛ս Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Ե., 1960, էջ 494):

[18] Մանրամասն տե՛ս **Ղազախեցյան Վ.**, Հայաստանը 1920-1940 թթ., էջ 67:

[19] Տե՛ս ԲՀԱ, էջ 95-96:

[20] Նույն տեղում, էջ 93:

Հյուսիսային ուղղության ձախ թևում գործող կարմիրների վստահելի հենակետը գերազանցապես մոլոկանաբնակ Ելենովկան էր: Հակա-ապստամբական շարժումը մեծ ոգևորություն էր առաջացրել Ելենովկայի մոլոկան բնակչության շրջանում: Այդ կապակցությամբ ապստամբության ականատես հուշագիր Արմեն Սևանը գրում է. «Կռի ճակատ կազմված էր եւ Ելենովկա, նախաձեռնութեամբ այդ շրջանի մոլոկաններու եւ փախստական կարմիր զօրքերու եւ կոմունիստներու»[21]:

Ա. Սևանի հաղորդումից գրեթե ոչնչով չի տարբերվում սպարապետ Կուռոյի (Սուրեն Թարխանյան) շտաբի պետ Գարեգին Սարգիսբեկյանի մարտի 11-ի Յապոնին ուղղված նամակում նշվածը, որ «Ելենովկայի ուղղությամբ մեր դեմ կռվում են հիմնականում մոլոկանները»[22]: Սա պատահական չէր: Հանրահայտ է, որ ռուսական տիրապետության ժամանակ ինչպես ամենուր, այնպես էլ Արևելյան Հայաստանում ռուսները ազդեցիկ ուժ էին թե՛ պետական մարմիններում և թե՛ տնտեսության մեջ: Հայոց անկախ պետականության հռչակումից հետո ռուսների արտոնյալ կարգավիճակը կտրուկ փոխվեց. «...նրանց դիւրը չէր գալիս մեր պետութեան ձգտումը՝ հաւասարեցնել հայ գիւղացու և ռուս գիւղացու վիճակը հողաբաժանման խնդրում և հայոց լեզուն պետական լեզու դարձնել հանրային բոլոր գործերում: Առաջինը դիւր չէր գալիս ռուս գիւղացիներին, որովհետեւ խախտում էր նրանց առանձնաշնորհեալ դիրքը, իսկ երկրորդը դիւր չէր գալիս մասնաւորապես ռուս պաշտօնեաներին, որովհետեւ դժուարացնում էր նրանց պաշտօնավարութիւնը Հայաստանում: Այսպիսով՝ յանձին ռուս ազգաբնակչութեան՝ ընդհանուր առմամբ մենք ունէինք մեր պետականութեանը առնուազն անբարեացակամ մի տարր»[23], - նշում է հոդվածագիրը: Ռուս բնակչությունը համոզված էր, որ խորհրդային իշխանությունը որևէ կերպ կվերականգնի նախկինում իր ունեցած արտոնյալ վիճակը կամ նվազագույնը իրեն չի մղի դեպի նոր փորձությունների: Պետք է նշել մի հանգամանք ևս. Ելենովկայի բոլշևիկյան կազմակերպությունը[24] Նոր Բայազետի գավառում աչքի էր ընկնում իր կազմակերպվածությամբ ու ակտիվ գործունեությամբ: Բոլշևիկները Ելենովկայի շրջանի բնակչության, հատկապես մոլոկանների

---

[21] **Սևան Ա.**, *Փետրվարի 18-ի հեղափոխությունը (Վեմ, 1936, թիվ 1, հունվար-փետրվար, էջ 96): Արմեն Սևանը արևմտահայ դաշնակցական գործիչ Հովհաննես Դևեջյանի գրական կեղծանունն է: Ապստամբության շրջանում նա եղել է Ախտայի շրջանի ՀՓԿ նախագահը (տե՛ս* **Հակոբյան Ա.**, *նշվ. աշխ., էջ 90):*

[22] *ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 13:*

[23] *Հայրենիք, ամսագիր, Բոստոն, 1924, հունիս, էջ 70-71:*

[24] *Ելենովկայում բոլշևիկյան բջիջ և դրա ազդեցությամբ բանվորների ու գյուղացիների խորհուրդ ձևավորվել էր դեռ 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո (մանրամասն տե՛ս* **Հարությունյան Հ.**, *Նոր Բայազետի գավառը 1914-1920 թթ., Ե., 2012, էջ 276-280):*

շրջանում քարոզչական լայն գործունեություն էին ծավալել: Ըստ բոլշևիկների՝ խորհրդային իշխանությունը մոլոկանների համար այն միակ և հուսալի փարոսն է, որ կարող է լուսավորել նրանց ազգային, սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային առաջընթացի ճանապարհը և փրկել տարրալուծումից: Նոր Բայազետի գավառում խորհրդային ուժերի դեմ ի սկզբանե ճակատ էր բացվել Բասարգեչարի գավառամասում: Սկզբնաղբյուրները վկայում են, որ ապստամբների կողմից Երևանը գրավելու օրը՝ փետրվարի 18-ին, Բասարգեչարի կողմից ապստամբներին օգնելու համար Եղվարդ ուղարկվեց արևմտահայերից կազմված մեծաթիվ հեծյալ ջոկատ, որն ակտիվ մասնակցություն ունեցավ Ախտայի շրջանում ընթացող մարտականգործողություններին[25]: Գ. Նժդեհի հանձնարա-րությամբ Բասարգեչարի շրջան են մեկնում մակվեցի խմբապետներ Մեսրոպը և Գ. Շահինյանը՝ տեղում նոր ջոկատներ կազմակեր-պելու համար[26]: Շատ շուտով Բասարգեչարի շրջանը նույնպես անմիջականորեն ներգրավվեց ապստամբության մեջ: «Սյունիքի մեր հաջողությունների ազդեցության տակ, - գրում է Գարեգին Նժդեհը, - պոռթկում է և Բասարգեչարը: Այդ շրջանում կանգնած բոլշևիկյան թնդանոթաձիգ գունդը, ապստամբելով խորհրդային իշխանության դեմ, շարժվում է դեպի Նոր Բայազետ քաղաքը և, առանց կռվի, գրավում է վերջինը: Քաղաքի և շրջակայքի բոլշևիկ տարրերը, առանց դիմադրության, քաշվում են հյուսիս և ամրանում Սևանա լճի ափին ընկած մալական (ռուս) գյուղերում»[27]: Գ. Նժդեհի հաղորդումից ակներև է դառնում, որ Նոր Բայազետը գրավել է Հայրենիքի փրկության կոմիտեի կողմն անցած բոլշևիկյան թնդանոթաձիգ գունդը, առանց տեղի բնակչության մասնակցության: Ուստի իրականությանը չի համապատասխանում Ա. Սևանի այն պնդումը, թե «Առանց կապ ունենալու ապստամբ վայրի՝ Արարատեան դաշտի հետ, ինքնաբերաբար, ապստամբեր էին ու վերջ դրել բոլշեւիք վարչութեան նաև Դարալագեազն ու Նոր Բայազէդը, առաջինը փետրվարի 17-ին, երկրորդը՝ 22-ին»[28]: Իսկ իրականությունն այն է, որ մինչև քաղաքից հեռանալը բոլշևիկները հասցրել էին բանտարկված 300 բանտարկյալներից շատերին գլխատել: Արդարությունը պահանջում է ասել, որ հակառակորդի հանդեպ իրենց հերթին դաժանություններ են իրականացրել նաև ապստամբության ղեկավարները: Նոր Բայազետի անկումով ապստամբների կողմից է՛լ ավելի ուժգնացավ Ելենովկային սպառ-նացող վտանգը: Պետք է նշել, որ թե՛ ապստամբների և թե՛ խորհրդային ուժերի համար առանցքային ռազմավարական նշանակություն ուներ Ելենովկայի ռազմաճակատը, քանզի Ելենովկայով էր անցնում մայրաքաղաքը

---

[25] Տե՛ս ԲՀԱ, էջ 94:

[26] Տե՛ս **Նժդեհ Գ.,** նշվ. աշխ., էջ 135:

[27] Նույն տեղում:

[28] **Սևան Ա.,** *Փետրվարի 18-ի հեղափոխությունը (Վեմ, 1936, թիվ 1, հունվար-փետրվար, էջ 96):*

հանրապետության հյուսիսային շրջանների, ասել է թե Ռուսաստանի հետ կապող ճանապարհը: Ուստի կարմիրներն ամեն գնով պայքարում էին իրենց ձեռքում պահելու Ելենովկան, իսկ ապստամբները՝ գրավելու Ելենովկան ու Սեմյոնովկայի լեռնանցքը և կարմիրներին զրկել Ռուսաստանից սպասվող օգնությունից: Ահա թե ինչու Ելենովկայի համար կռիվներն անզիջում էին: Ռազմական գործողությունների առաջին փուլում, ավելի ստույգ՝ փետրվարի 20-ին ապստամբները Ծաղկունքի և Օրդաքլուի կողմերից միաժամանակյա հարձակում սկսեցին Ելենովկայի ուղղությամբ: Անհաջողության են մատնվում Ելենովկան գրավելու ապստամբների փորձերը: Հանդիպելով հակառակորդ կողմի ուժեղ դիմադրությանը՝ նրանք նահանջում են ելման դիրքեր: Ելենովկան շարունակում էր կռվախնձոր մնալ: Երկուստեք (կարմիրները և ապստամբները) ձեռնարկեցին նոր ուժերի համալրում: Ըստ օպերատիվ մի ամփոփագրի՝ փետրվարի վերջի դրությամբ մոտավոր տվյալներով Ելենովկայի ճակատում ապստամբները կենտրոնացրել էին 1000 սվին, 200 թուր, 5 գնդացիր և 3 հրանոթ: Որոշակի քանակի զինուժ ապստամբներն ունեին նաև Նոր Բայազետի՝ Աղզիբիր-Նոր Բայազետ-Նորատուս տեղամասում՝ 300 սվին, 100-150 թուր և 8 գնդացիր[29]: Ելենովկան և Սեմյոնով-կայի լեռնանցքը ապստամբների գրավելու հրամայականով է՛լ ավելի էր կարևորվում Ախտայի ճակատի դերն ու նշանակությունը: Ապստամբներն այս ճակատում կենտրոնացնում են մեծաքանակ ուժեր և զինտեխնիկա: Այստեղ գտնվող հայտնի դաշնակցականներ Համո Օհանջանյանի, Հակոբ Տեր-Հակոբյանի, Համբարձում Տեմճյանի, Արշավիր Աստվածատրյանի և այլոց խմբին միացավ նաև Կարո Սասունին, որն օգնեց ճակատ մտցնելու նոր թնդանոթներ: Այստեղ փոխադրվեցին Սասունցի Մուշեղի և Փիլոսի հեծյալների մի մասը, Երևանից մտավորականների և միլիցիոներների գումարտակը և եզդիների վաշտը[30]:

Ուժերի կենտրոնացում էր տեղի ունենում նաև հակառակորդի ճամբարում, քանզի կարմիրներին հրամայված էր գրավել և պահել իրենց ձեռքում Ծաղկունք, Շահրիզ-Ելենովկա-Օրդաքլու գիծը: Ելենովկա-Ախտա ճակատում գործող բոլշևիկյան կանոնավոր զորամասերի շարքերը համալրվեցին կոմունիստներից և կոմերիտական-ներից կազմված կամավորական ջոկատներով: Օրինակ՝ 1921 թ. փետրվարի 20-ին Նոր Բայազետի կոմունիստ ակտիվիստներից ստեղծված 300 հետևակից և 50 հեծյալից կազմված ջոկատը տեղափոխվեց Օրդաքլու, համալրեց կարմիրների շարքերը և առաջադրանք ստացավ մասնակցելու նշված գծի պաշտպանությանը[31]: Ավելի ուշ՝ փետրվարի 26-ին, Ելենովկայի ճակատի մարտական ուժերին միացավ Ղազախի գավառի Քարվանսարա, Սևքար, Աչաջուր և այլ շրջանների ու գյուղերի աշխատավորներից կազմված կոմունիստական

---

[29] Տե՛ս ԲՀԱ, թիվ 1, էջ 103, 108: **Հակոբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 98:

[30] **Ղազախեցյան Վ.**, Հայաստանը 1920-1940 թթ., էջ 70:

[31] Տե՛ս ԲՀԱ, էջ 96-97:

գումարտակը[32]: Այս ճակատը համալրեց նաև Ղարաքիլիսայի երկաթուղու կայարանի կոմունիստ բանվորներից կազմված 47-հոգանոց «Երկաթյա ջոկատը»՝ Պյոտր Կուզնեցովի (Դարբինյան) հրամանատարությամբ, որը Դիլիջանի վրայով ան-ցավ Ելենովկա: Ջոկատի անդամ Լ. Հովհաննիսյանը վկայում է, որ ջոկատը ակտիվորեն մասնակցել է Չըռչռ գյուղի համար մղված կռիվներին[33]: Հավելենք, որ Չըռչռի համար կռիվների 4-րդ օրը օգնության է հասնում նաև Բաքվից եկած հայկական բանվորական ջոկատը[34]: Ըստ արխիվային մի փաստաթղթի՝ փետրվարի 26-ի դրությամբ Ելենովկայի ճակատում կարմիրների գնդում հաշվվում էր 800 սվին[35], այդ նույն ժամանակ նրանց ընդհանուր զինուժը Օրդաքլու-Նոր Բայազետ ուղղությամբ եղել է 500-600 մարդ[36]: Այս ամենից բացի՝ արձանագրվել են նաև ռազմական գործողությունների ժամանակ ապստամբների շարքերից փախուստների և բոլշևիկյան ուժերի կողմն անցնելու բազմաթիվ դեպքեր[37]:

Վավերագրական ու հուշագրական փաստերի հիման վրա Ա. Հակոբյանի կազմած տվյալներով՝ փետրվարի վերջի և մարտի սկզբի դրությամբ հակառակորդ կողմերը երկու ճակատներում ունեցել են մոտավորապես հավասար թվով զինուժ. Ելենովկայի ճակատում յուրաքանչյուրը 1500-2000 կռվող[38]:

Ուժերի վերախմբավորումից հետո կողմերը պատրաստ էին անցնելու ակտիվ մարտական գործողությունների:Ղազախ-Դիլիջան մարտական շրջանի պետ Ալեքսանդր Շիրմախերը հրամաններից մեկում հայտնում է, որ Ղամարլուի ճակատի (փետրվարի 25-ի) հարձակմանն աջակցելու համար Բաքվից հրաման էր արձակված՝ վճռական գործողությունների անցնել նաև Ելենովկայի ճակատում[39]: Առաջինը փետրվարի 27-ին նախահարձակ եղան ապստամբները: Ա. Շիրմախերը փետրվարի 28-ին ուղիղ հեռախոսակապով 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Ա. Հեկկերին հայտնում է, որ «փետրվարի 27-ին հակառակորդը ամբողջ ճակատով Բայազետից և Ներքին Ախտայից (200 սվին, 4 հրանոթ, մեծ քանակությամբ գնդացիր) անցել է հարձակման Ելենովկայի տեղամասի ուղղությամբ: Մեր ջոկատները, որ կանգնած էին Ալեք-սանդրովկայում, նահանջել են Օրդաքլու: Հակառակորդը ամրացել է (հասկանալ

---

[32] **Հակոբյան Արշ.,** *Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թ., Ե., 1948, էջ 78:*

[33] *Տե՛ս Խորհրդային Հայաստան, 15.III.1926:*

[34] *Նույն տեղում:*

[35] *Տե՛ս ԲՀԱ, էջ 89:* **Հակոբյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 98:*

[36] *Ղամարլուից-Զանգեզուր (ժողովածու), Հիշողություններ Հայաստանի քա-ղաքացիական կռիվների մասին, կազմեց և խմբագրեց՝* **Աբրահամյան Խ.,** *Ե., 1931, էջ 140:*

[37] *Տե՛ս ԲՀԱ, էջ 135:* **Նժդեհ Գ.,** *նշվ. աշխ., էջ 137:*

[38] **Հակոբյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 99:*

[39] *Նույն տեղում, էջ 98:*

Ներքին Ախտայի ուղղությամբ - Հ.Հ.) Դմաշեն գյուղում: Մեր ուժերն ամրացել են Ծաղկունքում»[40]: «Ներկա պահին մեր ուժերը, - շարունակում է Ա. Հեկկերը, - տեղաբաշխվել են հետևյալ կարգով. Ծաղկունքում զբաղեցրել են 20-րդ ուսումնական և կարաբինային գումարտակները, 1 համահավաք վաշտ Չայլիյում (պետք է լինի Չրոչռում - Հ. Հ.), Ելենովկայում՝ 179-րդ գնդի երկու վաշտ և Քարվանսարայի գումարտակի 130 սվին, Օրդաքլուում՝ համահավաք գումարտակի 2 վաշտ, 179-րդ գնդի 1 վաշտ և Քարվանսարայի գումարտակի 60 սվին, Ելենովկայում գտնվում է մեկ միջոցային հրանոթ և մեկ դասական մարտկոց, Օրդաքլուում՝ երկրորդ դասական մարտկոցը»: Այնուհետև Ա. Շիրմախերը խնդրում է շտապ մարտական տեղամաս փոխադրել ռուսական կանոնավոր զորամասեր, քանի որ առկա ուժերով անհնարին է պաշտպանել զբաղեցրած տեղամասը[41]: Ուշագրավ է, որ այդ կապակցությամբ նույն պահանջն է դնում նաև Ղազախ-Դիլիջան մարտական շրջանի շտաբի պետ Ա. Միտրոպոլևսկին 11-րդ բանակի շտաբի պետ Մ. Լևանդովսկու հետ ունեցած հեռախոսազրույցում: Զեկուցելով ապստամբների կողմից փետրվարի 27-ին Դմաշենը գրավելու և մեծաթիվ ուժերով (1000-ից-1200 մարդ, հրանոթ, մեծ քանակությամբ գնդացիրներ) Ծաղկունքի վրա հարձակվելու մասին՝ միաժամանակ խնդրում է անհապաղ իր տրամադրության տակ ուղարկել ամենաքիչը երկու բրիգադ՝ հակահարձակման անցնելու համար և հավելում է, որ ունեցած ուժերով չեն կարող պաշտպանել Ելենովկան և Սեմյոնովկայի լեռնանցքը[42]: Մեծ կորուստների գնով ապստամբների հարձակումը հետ է մղվում: Ակտիվ ռազմական գործողությունների մեջ ներգրավվեցին նաև Նոր Բայազետի ապստամբական ուժերը՝ առաջադրանք ունենալով միանալ դեպի Ելենովկա շարժվող Ներքին Ախտայի ուժերին՝ Սեմյոնովկայի լեռնանցքի վրա հարձակվելու և այնտեղ ամրանալու համար:

Նոր Բայազետի շրջանի դեպքերի առնչությամբ ուշադրության է արժանի Համո Օհանջանյանի հաղորդած տեղեկությունը: 1921 թ. մարտի 7-ին Ախտայի ճակատից Հ. Օհանջանյանը ուղիղ կապով հաղորդում է Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Ս. Վրացյանին հետևյալը. «Երեկ ստացա Նոր Բայազետից նամակ ամսի 5-ից գրած՝ Շահնազարյանից ևս մեկ նամակ մարտի 3-ից՝ գրած Նժդեհից Քեշիշքենդից: Մարտի 5-ին Մեսրոպը և Շահինյանը Նժդեհի Դարալագյազի զինվորներով մտել են Նոր Բայազետ»[43]: Անհրաժեշտ էր ամբողջովին տիրել Նոր Բայազետի շրջանին և այն ամրացնել լրացուցիչ ուժերով: Շարունակելով հաղթարշավը՝ Նոր Բայազետի ջոկատը համառ մարտերից հետո՝ մարտի 6-ին, գրավում է Աղզիբիրը՝ վերցնելով 45 գերի, գնդացիրներ, մեծ

[40] Տե՛ս ԲՀԱ, էջ 102-103:
[41] Նույն տեղում:
[42] Նույն տեղում:
[43] ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 30:

քանակությամբ փամփուշտներ, տարբեր տրամաչափի հրացաններ և ձիեր: Հակա-ռակորդի կենդանի մնացած ուժերի մի մասը հեռանում է լեռները, մասամբ էլ՝ Ալեքսանդրովկա[44]: Աղզիբիրի գրավման օրը Նոր Բայազետի ջոկատի հրամանատարությունը Հայրենիքի փրկության կոմիտեին հայտնում է, որ բոլշևիկները, նահանջելով շրջանից, կատարել են վայրագություններ հատկապես արևմտահայ բնակչության նկատմամբ: Կոմունիստներից կազմված պատժիչ ջոկատը, ճանկելով 150 արևմտահայերի, տեղափոխում է Ելենովկա և լճի ափին բոլորին գնդակահարում է և դիակները նետում լիճը[45]:

Փաստորեն մարտի սկզբներին Նոր Բայազետի շրջանն ամբողջովին անցնում է ապստամբների ձեռքը: Այս շրջանի գրավումն ընդհանուր ապստամբության ֆոնի վրա ուներ ռազմավարական կարևոր նշանակություն՝ այդ ուղղությունը օժանդակ ենթաճակա-տից վերածվեց առանցքային կարևորության ճակատի: Բանն այն է, որ հիշյալ գավառամասը բոլշևիկներից ազատագրելով՝ ապ-ստամբները դյուրացրին կապը Ներքին Ախտայից դեպի Ելենովկա շարժվող յուրայինների հետ: Նոր Բայազետի ապստամբական ուժերի ղեկավարների պահանջով Գորիսից Դարալագյազի վրայով 100 հեծյալների խմբով Գարեգին Նժդեհը[46] եկավ Նոր Բայազետի շրջան[47]: Միջանկյալ նշենք, որ Նոր Բայազետի շրջան Գարեգին Նժդեհի գալը և Երանոս-Ղարանլուղ ամրացված շրջանի ապստամբական ուժերի հրամանատարությունն ստանձնելը ցնցող ազդեցություն գործեց Կարմիր բանակի հրամանատարության վրա: Ասվածը հիմնավորելու համար բերենք հետևյալ փաստը: Ա. Շիրմախերը հետևյալ կերպ է ներկայացնում փաստը իր վերադաս Մ. Մոլկոչանովին. «Նոր Բայազետի տեղամասում հակառակորդը կենտրոնացել է Երանոս-Ղարանլուղում և նպատակ ունի շուտով անցնել հարձակման: Այդ տեղամասը ղեկավարում է լեռնային գայլ Նժդեհը»[48]:

Կրկին վերադառնալով Նոր Բայազետի գավառ Գ. Նժդեհի մտնելուն՝ կարևորում ենք մեջբերել նրա բացատրությունն այդ կապակցությամբ. «Ցանկանալով ինձ համար պարզել իրերի իսկական դրությունը Նոր Բայազետի շրջանում, հրավիրում եմ ինձ մոտ խմբապետ Աղաբեկին[49] լսելու.

---

[44] *Նույն տեղում, թ. 38:*

[45] *Նույն տեղում, թ. 50:*

[46] *Ներքին Ղարանլուղ գյուղում սուրհանդակի միջոցով Նժդեհը ստանում է Ս. Վրացյանի 1921 թ. փետրվարի 20-ով թվագրված գրությունը Հայաստանում խորհրդային իշխանության տապալման մասին (տե՛ս* **Նժդեհ Գ.**, *նշվ. աշխ., հ. 2, էջ 134-135):*

[47] *Նույն տեղում, էջ 136:*

[48] *ԲՀԱ, էջ 124:*

[49] *Վարդենիկցի (նախկինում՝ Գյոզալդարա) նշանավոր խմբապետ Աղաբեկ Մելքոնյանի կամ ինչպես ժողովուրդն էր ասում Տաղլարի (Սարերի) Աղաբեկի մասին մանրամասն տե՛ս* **Բեգլարյան Ի.**, *Ֆիդայիներ, Ե., 2005, էջ 314-318:* **Մանուկյան Պ.**, *Վարդենիկ, Ե., 2008, էջ 126-136:*

-Ինչու՞ համար ինձ կանչեցիք Նոր Բայազետ:

-Որպեսզի ժողովուրդը տեսնի, որ մենք կապ ունինք ձեզ հետ, որ կարիքի դեպքում կարող ենք օգնություն ստանալ Սյունիքից, և որ մեր թիկունքն ապահով է»[50]:

Անդրադառնալով այդ օրերին Նոր Բայազետի շրջանում տիրող ընդհանուր կացությանը՝ Գ. Նժդեհը նշում է. «Անցնելով Սելիմի լեռնանցքը, կանգ եմ առնում ճանապարհի վրա ընկած բոլոր գյուղերում, խոսում եմ ժողովրդի հետ և դիտում: Ժողովուրդը անշարժ է և անտարբեր: Բոլշևիկ ասելով՝ նա հասկանում է ծով ռուս ժողովուրդը և սարսափում է նրա դեմ զենք բարձրացնելու մտքից: Նա զարմանքով է լսում Սյունիքի կռիվների մասին, նա հիանում է, բայց հանդգնելու թափ չունի: Կան, անշուշտ, տարրեր, որոնք յոթը լեզվով անիծում են կարմիրների Հայաստան ոտք դրած օրը և... այսքանը միայն»[51]: «Այդտեղ գյուղացիությունը, - շարունակում է Գ. Նժդեհը, - ծանոթ չէ «հանդգնելու արվեստին». նա չունի ապստամբ ժողովրդի հպարտությունն ու քաղցր ինքնագիտակցությունը»[52]: Փայլուն մտավորականի և մեծ հայրենասերի կողմից լսում ես բաներ, որոնք զարմանքի և տարակուսանքի զգացմունքներ են առաջացնում մարդկանց մեջ: Նա զուգահեռներ է անցկացնում Սյունիքի և Նոր Բայազետի շրջանի միջև՝ հետևյալ միտքը արտահայտելով. «Հոգեբանորեն երկու տարբեր աշխարհներ են Սյունիքն ու Նոր Բայազետը:

Առաջինում, գուցե և մարդ չգիտեք, որ կրոնական անկեղծությամբ չասի. «Իմ ամբողջ արյունը պատկանում է հայրենիքիս»: Երկրորդում՝ սյունեցու մտադրությամբ պատրաստ միայն անհատներ կարելի է գտնել»[53]:

Բայց մի՞թե սույն գնահատականները ճշմարիտ են ու տեղին, իհարկե ոչ: Անշուշտ, առաջին հայացքից կարելի է այս կարծիքի հեղինակին միանալ և ասել, որ նորբայազետցին չունի ապստամբ ժողովրդի հպարտություն ու քաղցր ինքնագիտակցություն: Սակայն այս դեպքում ընդհանրապես վերանում է ինչ-որ պատ-ճառների մասին խոսելու անհրաժեշտությունը: Եվ այսպես, կա՞ն արդյոք բավարար հիմքեր՝ պնդելու, թե ինչ պատճառներով էր Նոր Բայազետը հայտնվել հակաապստամբական ուժերի ճամբարում: Չխորանալով Նոր Բայազետի գավառի՝ դեգերումներով հարուստ պատմության մեջ՝ նշենք միայն, որ այս գավառի հայությունը ապստամբ ժողովրդի լավագույն հատկանիշներ դրսևորել է դեռ 1920 թ. Մայիսյան ապստամբության (անկախ այս ապստամբությանը տրված իրարամերժ և տարաբնույթ գնահատականներից) ժամանակ: Փետրվարյան ապստամբության ժամանակ Նոր Բայազետի շրջանը այսպես կոչված կարմիր գոտում հայտնվել էր տնտեսական և այլ հանգամանքներից

---

[50] **Նժդեհ Գ.,** *նշվ. աշխ., հ. 2, էջ 136:*

[51] *Նույն տեղում, էջ 135:*

[52] *Նույն տեղում:*

[53] *Նույն տեղում:*

ելնելով: 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության կառավարության իրականացրած սոցիալ-տնտեսական քաղաքականությունը հիմնովին ի դերև էր հանել սեփական իշխանությունների նկատմամբ նորբայազետցիների հույսերը, և նույնպիսի իրավիճակում հայտնվելու վախը չափազանց մեծ էր: Եվ սա վերաբերում է ոչ միայն Նոր Բայազետին: Կա՞ն արդյոք բավարար հիմքեր՝ պնդելու, թե իսկապես Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեությունից բնակչության դժգոհությունը համընդհանուր էր: Այս առնչությամբ նշենք, որ Փետրվարյան ապստամբությանը հիմնականում չմասնակցեցին, առանձին բացառություններով, Հայաստանի հյուսիսային շրջանները (Ալեքսանդրապոլի գավառը զինակալել էին թուրքերը), որոնք ակտիվ մասնակցություն էին ունեցել Մայիսյան ապստամբությանը: Իհարկե չեն բացառվում նաև հայը հայի դեմ չկռվելու, ռուսի վրա զենք չբարձրացնելու գործոնները: Անշուշտ, չի կարելի անտեսել բոլշևիկների կազմալուծիչ քարոզչությունը: Այդ ամենի մասին քաջ գիտակցում էր Գ. Նժդեհը, երբ գրում էր. «Այս շրջա-նում (Նոր Բայազետի - Հ.Հ.) խիստ և վճռական լինել չի կարելի, որովհետև ժողովուրդը չի ապստամբել: Եղբայրը եղբոր, որդին հոր, ինչպես և բարեկամը բարեկամի դեմ չի ուզում կռվել: Չեն կռվում և ռուսների դեմ: Իսկ եթե զոռով քշեցիր առաջ, դասալքում են դեռ կռիվը չսկսված...»[54]:

Մի բան ակնհայտ է՝ նորբայազետցին ապստամբ լինելուց զատ՝ նախևառաջ սովորական քաղաքացի է, իսկ քաղաքացիական դիրքորոշման իրավունք ցանկացածն ունի, անգամ հանցագործը: Այս կապակցությամբ տեղին է հիշել Մեծն Կեսարին (Ք. ա. I դար): Նա ասում է՝ ովքեր մեր կողքին չեն, ուրեմն մեզ հետ չեն: Պետք չէ իմաստուն լինել հասկանալու համար, որ կողքին չլինելը դեռ չի նշանակում թշնամի ու հակառակորդ լինել:

Մարտի սկզբներին մարտական գործողությունները մտնելու էին վճռական և որոշիչ փուլ: 11-րդ բանակի հրամանատարությունը լրացուցիչ ուժեր է կենտրոնացնում Հայաստանի հյուսիսային կարմիր գոտու ուղղություններում՝ ապստամբների հետ հաշիվները վերջնականապես մաքրելու համար: Հարձակումը իրականացնելու էր 54-րդ բրիգադը՝ Շտրոմբախի հրամանատարությամբ, որի մեջ մտնում էր 161-րդ գունդը՝ 2 գումարտակով, 17 գնդացիրով, 162-րդ գունդը՝ 2 գումարտակով, 16 գնդացիրով, համահավաք գումարտակը՝ 5 գնդացիրով, Դիլիջանի կարաբինային գումարտակը՝ 2 գնդացիրով, Քարվանսարայի գումարտակը՝ 2 գնդացիրով, Բաքվի կոմունիստական ջոկատը, 18-րդ հեծյալ գունդը՝ 2 հեծելավաշտով, 53-րդ հրետանային գունդը՝ 2 մարտկոցով, 54-րդ հրետանային գունդը՝ 1 մարտկոցով, 1 լեռնային և 1 միտցային հրանոթ, ընդհանուր առմամբ 7 գումարտակ, 2 հեծելավաշտ, 42 գնդացիր, 14 հրանոթ[55]: Սա նշանակում էր, որ հարձակման նախօրյակին խորհրդային բանակի զինուժն

[54] Նույն տեղում, էջ 137:
[55] Տե՛ս ԲՀԱ, էջ 109:

էապես գերազանցում էր ապստամբներին ինչպես մարդկային ուժի, այնպես էլ զինտեխնի-կայի տեսակետից: 11-րդ բանակի հրամանատար Ա. Հեկկերը դեռևս մարտի 9-ին Ա. Շիրմախերին հրամայել էր գրավել Երևանը, ամբողջ Հայաստանում վերականգնել խորհրդային իշխանությունը և միանալ Մոլկոչանովի կարմիր բանակի զորամասերին[56]:

Մարտի սկզբներին Նոր Բայազետի ապստամբական ուժերը կենտրոնացել էին Ղարանլուղ-Երանոս ուղղության վրա: Մարտի 11-ի և 13-ի դրությամբ Նոր Բայազետի ճակատում ապստամբներն ունեին 300 սվին, 100-150 թուր, 8 գնդացիր[57]: Մարտի 13-ի դրությամբ Ելենովկայի (Ներքին Ախտա-Քարվանսարա-Ռնդամալ) ճակատում ապստամբների զինուժը բաղկացած էր 1300 հետևակից, 200 հեծյալից և 200 «մահուզերիստից»[58]: Մարտի 10-ի գիշերը Ախտայի զորամասի պետը սուրհանդակի միջոցով տեղեկացնում է Նոր Բայազետի ուժերի հրամանատարությանը, որ մարտի 11-ի առավոտյան իր զորամասը վերսկսելու է չորրորդ հարձակումը Ելենովկայի դեմ: Նա պահանջում է խմբապետ Աղաբեկից հարձա-կում սկսել Նոր Բայազետի կողմից[59]: Նույն օրը գիշերը՝ ժամը 2-ի մոտերքը, Աղաբեկն ու իր օգնականը մեկնում են ճակատ՝ իրենց զորամասը մարտական պատրաստության մեջ դնելու համար: Նրանց հետ էր խմբապետ Մեսրոպը՝ Սիսիանի 20 ձիավոր խմբով[60]: Նոր Բայազետի և Գ. Նժդեհի ապստամբական ուժերը մարտի 10-ին անցան հարձակման և նույն օրը մտան Ալեքսանդրովկա: Այստեղ փոքրաթիվ հեծյալ խմբով Գ. Նժդեհի ջոկատներին միացավ օրդաքլեցի դաշնակցական ճանաչված խմբապետ Ռուբեն Թարփոշյանը (1877-1921 թթ.)[61]: Միջանկյալ նշենք, որ Ռուբենի անունը Հայաստանում հայտնի էր դարձել դեռ 1918-1920 թթ. Նոր Բայազետի գավառի, մասնավորապես Բասարգեչարի շրջանի թուրքերի հակապետական խռովությունների դեմ մղված պայքարում[62]: Ախտայի զորամասը մարտի 11-ի լուսաբացին ոչ միայն չի անցնում հարձակման, այլև անսպասելիորեն նահանջում է՝ թողնելով Ախտան, առանց տեղեկացնելու այդ մասին Նոր

---

[56] Նույն տեղում, էջ 108: Директивы командования фронтов Красной Армии (1917-1922 гг.), сборник документов, т. 3, М., 1974, с. 383:

[57] Տե՛ս ԲՀԱ, էջ 123-124:

[58] Նույն տեղում, էջ 112:

[59] **Նժդեհ Գ.**, նշվ. աշխ., հ. 2, էջ 137:

[60] Նույն տեղում, էջ 138:

[61] Ռուբեն Թարփոշյանը դավադրաբար սպանվել է 1921 թ. մարտի 15-ին Ներքին Ախտայից ծննդավայր Օրդաքլու տանող ճանապարհին՝ ելենովկացի մոլոկանի արձակած գնդակից:

[62] Մանրամասն տե՛ս **Մաթևոսյան Հ.**, Քաջարյուն խմբապետ Ռուբեն Թարփոշյանի ժամանակը: Հայրենիքի ձայն, 24.10.1990: **Բեգլարյան Ի.**, Հայդուկներ, Ե., 2005, էջ 314-318:

Բայազետի զորամասի հրամանատարությանը, որպեսզի վերջինս որոշեր իր հետագա անե-լիքները[63]*: Ախտայի զորամասի անսպասելի նահանջը կարելի է բացատրել ապստամբների շարքերում տիրող խուճապային իրավիճակով և հաղթանակի հանդեպ նրանց հավատի կորստով: Այսպես, Ախտայի ճակատի ղեկավարներից Հ. Օհանջանյանը մարտի 10-ին Գ. Նժդեհին ուղղված նամակում գրում է. «…Մեծ հույս ունեմ, որ ձեր գալուստը (Նոր Բայազետ - Հ.Հ.) պիտի ոգևորի և քաջություն ներշնչի այդտեղի և այստեղի ուժերին, որոնք, պիտի խոստովանեմ, ինձ բավականին վհատեցրել են իրենց խուճապային տրամադրությամբ… Ձեր բարոյական ազդեցությունը շատ հարկավոր է մեր այս ճակատի հաջողության համար…»*[64]*:*

Սակայն Գ. Նժդեհի ներկայությունն էլ չշտկեց իրավիճակը: Մարտի 11-ին՝ առավոտյան ժամը 5-ին, Օրդաքլուից Ղարաքիլիսայի կոմունիստական ջոկատը մյուս ջոկատների հետ համատեղ ուժերով հարձակում գործեցին Ալեքսանդրովկայի վրա և ստիպե-ցին ապստամբներին նահանջել[65]*: Ելենովկայի ուղղությամբ գործող կարմիր զորամասերը առաջադրանք ստացան գրավել Ներքին Ախտայի շրջանը և մինչև մարտի 22-ը մտնել Երևան: Այս շրջանում մարտի 3-ից մինչև 18-ըտեղի ունեցան կատաղի մարտեր: Բնակավայրերը ձեռքից ձեռք էին անցնում*[66]*: Խորհրդային զինուժը մարտի 11-ին գրաղեցրեց Սոլակ-Քաղսի-Ներքին Ախտա-Վերին Ախտա, իսկ մարտի 12-ին՝ Ալափարս-Սուխոյ Ֆոնտան-Նուռնուս-Նովոնիկոլաևկա, այսինքն՝ Երևանի վրա գրոհելու ռեալ բնագիծը*[67]*: Մարտի 13-ին կարմիրները հարձակվեցին Ռնդամալի վրա, սակայն հանդիպելով տեղի բնակչության և ապստամբների հակահարվածին՝ փախան Ելենովկայի ուղղությամբ: Հակառակորդն ունեցավ 50 զոհ, գերի ընկան ռուս զինվորներ, ինչպես նաև կրեց հեռախոսային սարքավորումների, զինամթերքի ու սննդի կորուստներ*[68]*: 11-րդ բանակի սպաներից Կուզնեցովը մարտի 18-ին Մ. Մոլկոչանովին տեղեկացնում է, որ իրենց զորամասերը Ելենովկայի ուղղու-թյամբ անցել են հարձակման և վերցրել են Ներքին Ախտան, Քաղսին, Սոլակը և շարունակում են հետապնդել հակառակորդին*[69]*: Հաղթական կռիվները փոխադրվեցին Սուխոյ Ֆոնտան*[70]*: Այստեղ կրած պարտությունը խուճապահար*

---

[63] **Նժդեհ Գ.,** *նշվ. աշխ., հ. 2, էջ 140:*

[64] *Նույն տեղում, էջ 138:*

[65] *Նույն տեղում, էջ 140: ԲՀԱ էջ 111:*

[66] *Մանրամասն տե՛ս* **Ղազախեցյան Վ.,** *Հայաստանը 1920-1940 թթ., էջ 70:*

[67] *Տե՛ս ԲՀԱ, էջ 109:*

[68] *Նույն տեղում:*

[69] *Տե՛ս ԲՀԱ, էջ 118:*

[70] *Երբ համառ կռիվներ էին գնում Սուխոյ Ֆոնտանի համար, Թիֆլիսից Երևան ժամանեց Հայոց բանաստեղծ Հովհ. Թումանյանը, ինչպես ինքն է ասում Երևանից Գ. Օրջոնիկիձեին ուղարկած հեռագրում վերջ տալու «այս ոչ ոքի համար հարկավոր արյունահեղությանը» (տե՛ս* **Թումանյան Հ.**, *ԵԼԺ, հ. 10, Ե., 1999, էջ 375):*

արեց ապստամբներին՝ և սկսվեց նրանց անկանոն նահանջը, ուժեղացավ դասալքությունը: Սուխոյ Ֆոնտանի կռիվների կապակցությամբ Երևանյան ուղղությամբ գործող բանակի հրամանատարությունը Մոլկոչանովին հաղորդում է, որ «Հակառակորդը չի դիմանում մեր գրոհներին, մոտեցնում է իր վերջին թույլ ռեզերվները»[71]:

Մարտի 24-ին ստեղծվում է Երևանյան զորախումբը՝ կազմված 20-րդ և 18-րդ հրաձգային դիվիզիաներից՝ Մ. Վելիկանովի հրամանատարությամբ[72]: Մարտի 27-ին Մ. Վելիկանովը Երևանի ուղղության ռազմաճակատի զորքերին հարձակման հրաման տվեց՝ ամենասեղմ ժամկետում՝ մինչև ապրիլի 1-ը, Երևանը գրավելու և Մոլկոչանովի զորքերի հետ կապ ստեղծելու համար: 11-րդ բանակի զորամասերը և պարտիզանական ջոկատները Քանաքեռի կողմից ապրիլի 2-ին մտան Երևան: Նոր Բայազետի ուղղությամբ գործող կարմիրները մարտի 11-ին մտան Հաջիմուխան և Աղզիբիր, 12-ին՝ Նոր Բայազետ, իսկ 13-ին իրենց ազդեցության տակ վերցրին Նոր Բայազետի ամբողջ շրջանը և դիրքավորվեցին Քյոսամահմատ-Ղուլալի սահմանագծի վրա: Ապստամբները, համառ մարտեր մղելով, նահանջեցին Ղարանլուղ[73]: Գ. Նժդեհը, հրահանգելով Նոր Բայազետի հրամանատարությանը՝ «ամեն գնով խումբ կանգել թշնամու առաջխաղացման դեմ դեպի Ղարանլուխ և Մելիմի լեռնանցքը»[74], վերադառնում է Վայոց ձոր: Հարկ է նշել, որ մարտական գործողությունները տեղի էին ունենում աննպաստ բնական պայմաններում՝ պատճառը ձմեռային դժվարություններն էին:

Նոր Բայազետը հանձնելուց երկու օր անց ապստամբները վերստին գրավում են քաղաքը, սակայն քաղաքի և շրջակա գյուղերի բնակչության ճնշման տակ նահանջում[75]: Աղբյուրները վկայում են, որ քաղաքի համար մղված մարտերի ժամանակ կարմիրներին մեծապես օգնեցին Ալեքսանդրովկայի, Ղշլաղի, Նորատուսի և հատկապես Ղուլալի գյուղերի բնակիչներից կազմված պարտիզանական ջոկատները, որոնք ապստամբներին հարվածներ էին հասցնում թիկունքից[76]: Այդ կապակցությամբ Նոր Բայազետի զորամասի հրամանատար փոխգնդապետ Բեկ-Զուրաբովը Ղարանլուղից մարտի 11-ին Գ. Նժդեհին հետևյալն է հաղորդում. «Ձեր ենթադրությունը քյավառցիների մասին կատարելապես իրականացավ: Դավաճանությունը քաղաքացիների կողմից էր, որոնք մեզ զրկեցին թիկունքից...»[77]:

---

[71] ԲՀԱ, էջ 121:

[72] **Հակոբյան Ա.,** նշվ. աշխ., էջ 100:

[73] **Նժդեհ Գ.,** նշվ. աշխ., հ. 2, էջ 140: Խորհրդային Հայաստան, 15.III.1926:

[74] Նույն տեղում, էջ 141:

[75] Նույն տեղում, էջ 140:

[76] Ղամարլուից Զանգեզուր հիշողությունների ժողովածու, Ե., 1931, էջ 140-143, **Նժդեհ Գ.,** նշվ. աշխ., հ. 2, էջ 140:

[77] Նույն տեղում, էջ 140:

Ստեղծված իրավիճակում ապստամբների նպատակն էր ֆիզիկական ու բարոյական ուժերը մեկտեղել և դրանք ի սպաս դնել Ղարանլուղը և Սելիմի լեռնանցքը հակառակորդին չհանձնելու համար: Վերջինիս պաշտպանության խնդրում ճիշտ է նկատում Գ. Նժդեհը. «Տիրելով այդ կարևոր կետին (Սելիմի լեռնանցքին-Հ.Հ.), նա (հակառակորդը - Հ.Հ.) կռիվների ծանրության կենտրոնը պիտի տեղափոխեր Վայոց Ձոր, հաջողության դեպքում վերստին փակեր Արարատյան Հայաստանից դեպի Սյունիք բացվող միակ դուռը և անխնա պիտի ոչնչացներ Երևանի ապստամբ տարրերը: ...Պետք էր խլել նրանից այդ հնարավորությունը»[78], որպեսզի կարմիրները, մինչև երևանյան գաղթականության Սյունիք անցնելը, չկարողանային օգտվել Սելիմի լեռնանցքից:

Ինքնապաշտպանությունն ուժեղացնելու համար Գ. Նժդեհը Սիսիանի վաշտերից մեկը Վայոց ձորից փոխադրում է Ղարանլուղ: Ստեղծում է զինվորական մի մարմին՝ բաղկացած Աղաբեկից, Մեսրոպից և մի թնդանոթաձիգ սպայից: Վերջիններիս տրամադրության տակ է դրվում նաև Սիսիանից ուղարկված հետևակային վաշտը[79]: Պետք է արժանին հատուցել ապստամբներին, որոնք ձմեռվա դժվարին պայմաններում, սակավաթիվ զինամթերքի ու պարենի բացակայությամբ անգամ կարողացան աներևակայելի սխրանքների գնով կատարել առաջադրված խնդիրը: Գ. Նժդեհը, եզրահանգումներ կատարելով կարմիրների առաջխաղացման դեմ դեպի Ղարանլուղ և Սելիմի լեռանցք ապստամբների, մասնավորապես Սյունիքի վաշտի ու ձիավոր խմբի հերոսամարտերի մասին, նշում է, որ նրանք կատարեցին իրենց փրկարար դերը և «Նոր Բայազետի շրջանը թողեցին Երևանի անկումից (ապրիլի 2 - Հ.Հ.) ամբողջ յոթ օր հետո, երբ Արարատյան գաղթականությունը արդեն գտնվում էր Վայոց Ձորում և Սիսիանում»[80]: Մեկ այլ առիթով անդրադառնալով Նոր Բայազետի ճակատի ռազմավարական նշանակությանը՝ Գ. Նժդեհը գրում է. «Նոր Բայազետի շրջանում իմ առաջ բերած շարժումն և իմ՝ անձամբ այն կողմն անցնելն այն նշանակությունն ունեցավ, որ բավական ժամանակ թշնամու ուժերը դեպի իրեն գրավեց և հապաղեցրեց Երեւանի անկումը»[81]:

Նոր Բայազետի ուղղությամբ մարտական գործողությունների ավարտական փուլը Մարտունու և Բասարգեչարի շրջաններում պատսպարված ապստամբական ուժերի ճնշումն էր, որը տեղի ունեցավ ապրիլի 2-15-ը[82]: Հարկ է նշել, որ նշված գավառամասերի գրավումով Նոր Բայազետի ապստամբ զորամասերի մարտական կենսագրությունը չի ավարտվել: Նոր իրադրության

---

[78] *Նույն տեղում, էջ 141:*

[79] *Նույն տեղում:*

[80] *Նույն տեղում, էջ 141:*

[81] **Հարությունյան Ա.,** *Գարեգին Նժդեհի 1921 թ. Թավրիզի դատավարությունը, Ե., 2004, էջ 107:*

[82] **Վարդապետյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 130:*

պայմաններում Հայրենիքի փրկության կոմիտեին հավատարիմ մնացած Նոր Բայազետի ջոկատները միացան Լեռնահայաստանի Արևմտյան ճակատի զորքերին: Լեռնահայաստանի Սպարապետի օգնական Կուռո Թարխանյանը 1921 թ. ապրիլի 24-ին հրամայում է Արևմտյան ճակատի զորքերին Նոր Բայազետի ջոկատներից կազմակերպել առանձին գումարտակներ. 1) Սևանա առանձին գումարտակ, 2) Երանոսի առանձին հետևակ գումարտակ, որի կազմակերպումը վերջացնել ամենակարճ ժամանակամիջոցում՝ իբրև հիմք ընդունելով՝ չորս վաշտանի կազմը, մի հետախուզիչ խմբով, հետևակ կամ ձիավոր, և մի գնդացրային խմբով, 2 գնդացիրով[83]: Կուռոն ապրիլի 28-ի թիվ 2 հրամանով Սևանա առանձին գումարտակի հրամանատար է նշա-նակում Աղաբեկ Մելքոն-յանին, իսկ Հայրապետ Զիլիֆխանյանին՝ Երանոսի առանձին հետևակ գումարտակի հրամանատարի պաշտոնակատար[84]: Վերոգրյալ գումարտակները Արևմտյան ճակատի զորքերի կազմում հայկական հեծելագնդի հետ հուլիսի 2-ին մտան Գորիս:

Հունիսի 24-ին Նոր Բայազետի կուսակցական կազմակերպությունների ընդհանուր ժողովը, լսելով Չալյանի և Նազարյանի զեկուցումները քաղաքական վիճակի մասին, հեռագիր է ուղարկում Հայաստանի Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահին և կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեին հետևյալ բովանդակությամբ. «…Ժողովը միանգամայն համաձայն լինելով կառավարության ներկա քաղաքականության հետ, Զանգեզուր ապաստանած խմբապետների և փաշաների ավանտյուրային վերջ դնելու գործում, կրկին հայտնում է ձեզ, որ ինչպես հակահեղափոխության սկզբնական ճնշման գործում, այնպես էլ այժմ Նոր Բայազետի կազմակերպությունը…նորից պատրաստ է կառավարության առաջին կոչին ելնելու ոտքի, վերջնականապես ջախջախելու համար կարմիր հայ բանվորների և գյուղացիների թշնամիներին… Զանգեզուրում դարան մտած ա-վանտյուրիստ դաշնակցականների վերջին մնացորդներին»[85]:

Այսպիսով, Նոր Բայազետի գավառի օրինակով փետրվարյան իրադարձությունների ուսումնասիրությունից կարելի է հանգել հետևյալ եզրակացության՝ Փետրվարյան ապստամբությունը հայոց նորագույն (և ոչ միայն նորագույն) պատմության ամոթալի և ցավալի իրողություններից է: Հայ պատմագրության մեջ ապստամբության և նրա պարտության պատճառների մասին հաճախ տրամագծորեն իրարամերժ մոտեցումների ու տեսակետների քննար-կումները կշարունակվեն կամ կավարտվեն, սակայն կմնա ցավը, կսկիծը, ամոթը այն ամենի, երբ «արյունը հոսում է առանց թշնամության ու

---

[83] Զանգեզուրի հերոսամարտը հրամաններում (1921 թ.), Կազմողներ՝ **Ղազա-խեցյան Վ., Գևորգյան Հ.**, Ե., 2008, էջ 15:

[84] Նույն տեղում, էջ 15-17:

[85] Խորհրդային Հայաստան, 29.VI.1921:

փոխադարձ բնաջնջման հիմքի»[86] *և բոլոր նրանց համար, ովքեր հնարավոր դարձրին եղբայրասպան պատերազմը: Այն, որ ազատ և անկախ ապրելու, սեփական ճակատագիրն ինքնուրույն տնօրինելու իրավունքը յուրաքանչյուր էթնիկ խմբի համար ի վերուստ տրված պարգևներն են, երկու կարծիք լինել չի կարող: Սակայն երբ օբյեկտիվ և սուբյեկտիվ իրողությունները հակառակն են գործում, ուրեմն քաղաքական ուժերից պահանջվում է դրսևորել առավելագույն ճկունություն, կանգնել ժողովրդի խաղաղ կյանքի կողմում, մինչև անհրաժեշտ պահը կհասունանա: Հայաստանում բոլորը գիտեին՝ այստեղ խորհրդային իշխանության դեմ անգամ չթիրախավորված քննադատության յուրաքանչյուր փորձ վերահսկվում և կասեցվում էր ինչպես Հայաստանի, այնպես էլ Խորհրդային Ռուսաստանի իշխանությունների կողմից, ուր մնաց՝ զինված ապստամբությունը:*

Փետրվարյան ապստամբությանը քաջածանոթ Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Հովհ. Քաջազնունին ճշմարտացիորեն նշում էր. «…ապստամբությունն իր իսկ ներսում կրում էր արդեն պարտության սաղմը, որովհետև հավատ չուներ հաջողության»[87]*: Ուստի արդարացում չի կարող ունենալ քաղաքացիական կռիվը մարդկային թանկ կորուստներով, առավել ևս ցեղասպանություն ապրած հայ ժողովրդի պարագայում:*

НОВОБАЯЗЕТСКАЯ ОБЛАСТЬ В ДНИ ФЕВРАЛЬСКОГО ВОССТАНИЯ 1921 Г.

АРУТЮНЯН Г. М.

Резюме

Недальновидная авантюристическая внутренняя политика советского правительства, в частности, система социально-экономических и политических репрессий подготовила почву для вооруженного восстания.

В феврале 1921 г. вспыхнуло вооруженное восстание, охватившее значительную часть Армении. Были созданы три фронта гражданской войны. В гражданскую войну были вовлечены север Армении (р-н Еленовка-Семеновка, Новобаязетская обл.) и часть Спитакского перевала.

Для противоборствующих сторон ключевую роль играл Еленовский фронт, поскольку Еленовка была связующей дорогой с Россией. Мятежникам так и не удалось захватить Еленовский и Семеновский перевалы.

---

[86] **Թումանյան Հ.,** *ԵԼԺ. հ. 10, էջ 375:*

[87] **Քաջազնունի Հովհ.,** *նշվ. աշխ., էջ 52:*

NOR BAYAZET REGION DURING THE FEBRUARY REVOLT IN 1921

H. HARUTYUNYAN

Abstract

In result of short-sighted and adventuris internal policy of Soviet Authorities (system of socioeconomic and political repressions) the state tasted the bitter fruits of sown seeds on the eve of the second year of its biography. Through this policy, the Soviet State Apparatus led to the revolt of the masses.

In February 1921, an armed revolt outbroke in most parts of Armenia. Three fronts of civil war were established. One of them was in the North of Armenia – the Soviet Zone with its two wings, the left one in Yelenovka- Semyonovka gate together with Nor Bayazet region and the right one – in the section of Spitak gate.

Yelenovka front had a key strategic role for conflicting parties as the road linking the capital to the Northern regions of the republic, to Russia particularly, passed through Yelenovka. The rebels did not cope with seizing Yelenovka, as well as Semyonovka gate.